

## Գտի՛ր Հոգեւոր Պարգետւ

1. ---- Կարողութիւն ունիմ կարգի դնելու կամ գաղափարներ, ժամանակ, մարդիկ:
2. ---- Յօժար եմ սերտել եւ սորվեցնելու պատրաստուիլ:
3. ---- Կրնամ Աստուծոյ տուած ճշմարտութիւնները կեանքի յատուկ պարագաներուն կապել:
4. ---- Աստուածային շնորհք ունիմ մարդոց օգնելու որ իրենց հաւատքին մէջ աճին:
5. ---- Փրկութեան ճշմարտութիւնը մարդոց բացատրելու կարողութիւն ունիմ:
6. ---- Կարողութիւն ունիմ կարեւոր որոշումներ առնելու երբ պէտք ըլլայ:
7. ---- Մարդոց ցաւերը կը զգամ:
8. ---- Շատ ուրախ կը զգամ իմ ունեցածներս պէտք ունեցողներու հետ բաժնեկցելով:
9. ---- Հաճոյքով կը սերտեմ:
10. ---- Աստուծոյ դատաստանին մասին խօսած եմ մարդոց եւ զգուշացուցած եմ զանոնք:
11. ---- Կը զգամ մարդոց իրական նպատակներն ու շարժառիթները:
12. ---- Կրնամ Աստուծոյ վստահիլ դժուար պարագաներու մէջ:
13. ---- Մեծ փափաք ունիմ օգնելու որ նոր եկեղեցիներ հիմնուին:
14. ---- Օգնելու մասին խօսելով չեմ բաւականանար այլ գործականօրէն կ'օգնեմ:
15. ---- Կը սիրեմ մարդիկ հիւրասիրել տանս մէջ:
16. ---- Կրնամ իմ հետս աշխատողներու ուղղութիւն տալ իրենց հասկացողութեան համապատասխան ձեւով:
17. ---- Կրնամ գործը բաժնել:
18. ---- Սորվեցնելու փափաք ունիմ:
19. ---- Կացութիւնը վերուժելու կարողութիւն ունիմ:
20. ---- Բնական հակում ունիմ ուրիշները քաջալերելու:
21. ---- Կ'ուզեմ առաջին քայլը առնել ուրիշ հաւատացեալներու հոգեւոր աճման մէջ օգնելու համար:
22. ---- Շատ յստակօրէն գիտեմ ուրիշներու վախի, առանձնութեան, ցաւի, կամ բարկութեան զգացումները:
23. ---- Յօժարութեամբ տուող անձ մըն եմ:
24. ---- Ժամանակ կը տրամադրեմ իրականութիւններ պրպտելու:
25. ---- Կը զգամ որ Աստուծոյ պատգամ մը ունիմ ուրիշներու փոխանցելիք:
26. ---- Կը գիտնամ երբ անձ մը անկեղծ է:
27. ---- Աստուծոյ յստակ տեսիլք ունիմ ապագային մասին եւ կրնամ ուրիշներու փոխանցել ասիկա որպէսզի իրականանայ:
28. ---- Պատրաստ եմ Աստուծոյ կամքին հպատակելու փոխանակ հարցումներ հարցնելու եւ տատամսելու:
29. ---- Կ'ուզեմ անլի ջանք թափել որ Աստուծոյ Խօսքը ուրիշ երկիրներ հասնի:
30. ---- Ուրախ կը զգամ երբ կարօտելալի մը կ'օգնեմ:
31. ---- Կրնամ խումբ մը մարդիկ ուրախութեամբ գործի լծել:
32. ---- Օտարներ իմ ներկայութեանս հանգիստ կը զգան:
33. ---- Կրնամ սորվեցնելու տարբեր կերպեր օգտագործել:
34. ---- Գիտեմ թէ ո՛վ պէտք ունի քաջալերանքի:
35. ---- Ուրիշ հաւատացեալներ մարգած եմ որ Քրիստոսի անլի մօտ քալեն:
36. ---- Յօժար եմ ամէն բան ընելու որ մարդիկ Քրիստոսի գան:
37. ---- Կ'ուզեմ տառապող մարդոց մօտենալ:
38. ---- Առատաձեռն եմ:
39. ---- Կրնամ նոր ճշմարտութիւններ գտնել:
40. ---- Աստուածաշունչին մէջէն մասնաւոր պարագաներու յատուկ պատգամներ կը գտնեմ եւ կ'ուզեմ մարդոց հետ բաժնեկցիլ:

41. ---- Կը զգամ երբ անձ մը Աստուծոյ կամքին համաձայն կը վարուի:
42. ---- Կրնամ Աստուծոյ վստահիլ նոյնիսկ եթէ ամէն բան մութ կ'երեւի:
43. ---- Կրնամ որոշել թէ Աստուած ո՛ր կ'ուզէ որ ուղղուինք եւ կրնամ խումբս առաջնորդել այդ ուղղութեամբ:
44. ---- Զօրաւոր փափաք ունիմ Աւետարանը հասցնելու ամէն տեղ:
45. ---- Կը սիրեմ նորեկներու ծանօթանալ եկեղեցիին եւ այլ շրջանակներու մէջ:
46. ---- Մարդոց պէտքերը կը զգամ:
47. ---- Կրցած եմ խումբ մը ուղղել, կազմակերպել եւ առաջնորդել:
48. ---- Ուրիշ հաւատացեալներ յաճախ կը դիմեն ինձի երբ դժուար որոշում մը պիտի առնեն:
49. ---- Կը մտածեմ թէ ինչպէ՛ս պէտք է մխիթարեմ եւ քաջալերեմ եկեղեցիի կամ Զանիցի անդամները:
50. ---- Կրնամ հոգեւոր ուղղութիւն տալ ուրիշներու:
51. ---- Կարողութիւն ունիմ փրկութեան Աւետարանը կորսուած մարդոց բացատրելու:
52. ---- Անսովոր կարողութիւն մը ունիմ տառապող մարդոց զգացումները հասկնալու:
53. ---- Գիտեմ որ բոլոր ունեցածներս Տէրոջն են եւ ես միայն անոնց տնտեսն եմ:
54. ---- Մարդոց տուած եմ Աստուծմէ ստացած պատգամներս:
55. ---- Կը զգամ երբ անձ մը Աստուծոյ առաջնորդութեամբ կ'ապրի:
56. ---- Կը ջանամ Աստուծոյ կամքին մէջ ապրիլ եւ միշտ պատրաստ ըլլալ Իրեն համար:
57. ---- Կ'ուզեմ Աւետարանը բաժնեկցիլ ուրիշ կրօնքներու հետեւողներուն հետ:
58. ---- Ուրիշ մարդոց ֆիզիքական պէտքերուն գիտակից եմ:
59. ---- Կարողութիւն ունիմ յստակ եւ դրական քայլեր առաջարկելու գործ մը յաջողցնելու համար:
60. ---- Եկեղեցի կամ Զանից եկող հիւրերը կը դիմաւորեմ եւ կը ծանօթանամ անոնց:
61. ---- Աստուածաշունչը կը բացատրեմ հասկնալի ձեւով:
62. ---- Ընդհանրապէս հոգեւոր լուծումներ կը գտնեմ հարցերու համար:
63. ---- Ծատ ուրախ կ'ըլլամ երբ առիթներ գտնեմ մարդիկ մխիթարելու, հանդարտեցնելու կամ խրատելու:
64. ---- Հանգիստ կը զգամ Քրիստոսը ոչ հաւատացեալներու հետ բաժնեկցելով:
65. ---- Ուրիշներու վրայ կրնամ ազդեցութիւն ունենալ որ իրենց տրուած կարողութիւնները լաւագոյն ձեւով գործածեն:
66. ---- Մարդոց յոգնութեան եւ ճնշուած ըլլալու նշանները շուտով կը տեսնեմ:
67. ---- Կը փափաքիմ առատաձեռնօրէն տալ այդ նպատակներուն որոնք արժանի են:
68. ---- Իրողութիւններ վերլուծելով իրարու կապելու կարողութիւն ունիմ:
69. ---- Աստուած ինձի յատուկ խօսքեր կու տայ ուրիշներու փոխանցելու համար:
70. ---- Երբ մարդիկ իրենց հոգեւոր կեանքին մասին կ'արտայայտուին, կրնամ զանազանել եթէ անկեղծ եմ թէ՛ ոչ:
71. ---- Կը սիրեմ Աւետարանը բաժնեկցիլ ուրիշ ազգէ կամ ենթահողէ եկած մարդոց:
72. ---- Կը սիրեմ մարդոց օգնելու համար փոքր ծառայութիւններ ընել:
73. ---- Կրնամ յստակ, պարզ ներկայացում մը կատարել:
74. ---- Կրցած եմ եկեղեցիս մէջ պատահած յատուկ պարագաներու մէջ գործածել Աստուածաշունչի ճշմարտութիւնները:
75. ---- Աստուած զիս գործածած է որ ուրիշներու օգնելու որպէսզի անելի նմանին Քրիստոսի:
76. ---- Զգացած եմ պէտքը մարդոց օգնելու որպէսզի կարենան անելի լաւ ծառայել Տէրոջ:
77. ---- Կը սիրեմ Յիսուսի մասին խօսիլ Զինք չգիտցողներուն:
78. ---- Անճանօթներ հանգիստ կը զգան իմ տունիս մէջ:
79. ---- Սերտողութիւններ կատարելու համար բաւական լայն աղբիւրներ ունիմ:
80. ---- Վստահութիւն ունիմ թէ որեւէ կացութիւն կրնայ փոխուիլ Աստուծոյ փառքին համար նոյնիսկ եթէ անկարելի կը թուի:

Առաջնորդ	----- + Հրց 6	----- + Հրց 16	----- + Հրց 27	----- + Հրց 43	----- = Հրց 65	-----
Կազմակերպիչ	----- + Հրց 1	----- + Հրց 17	----- + Հրց 31	----- + Հրց 47	----- = Հրց 59	-----
Ուսուցիչ	----- + Հրց 2	----- + Հրց 18	----- + Հրց 33	----- + Հրց 61	----- = Հրց 73	-----
Գիտութիւն փնտրող	----- + Հրց 9	----- + Հրց 24	----- + Հրց 39	----- + Հրց 68	----- = Հրց 79	-----
Իմաստուն	----- + Հրց 3	----- + Հրց 19	----- + Հրց 48	----- + Հրց 62	----- = Հրց 74	-----
Մարգարէ	----- + Հրց 10	----- + Հրց 25	----- + Հրց 40	----- + Հրց 54	----- = Հրց 69	-----
Զանգազանող	----- + Հրց 11	----- + Հրց 26	----- + Հրց 41	----- + Հրց 55	----- = Հրց 70	-----
Յորդորող	----- + Հրց 20	----- + Հրց 34	----- + Հրց 49	----- + Հրց 63	----- = Հրց 75	-----
Հովիւ	----- + Հրց 4	----- + Հրց 21	----- + Հրց 35	----- + Հրց 50	----- = Հրց 76	-----
Հաւատքով լեցուն	----- + Հրց 12	----- + Հրց 28	----- + Հրց 42	----- + Հրց 56	----- = Հրց 80	-----
Աւետարանիչ	----- + Հրց 5	----- + Հրց 36	----- + Հրց 51	----- + Հրց 64	----- = Հրց 77	-----
Առաքեալ	----- + Հրց 13	----- + Հրց 29	----- + Հրց 44	----- + Հրց 57	----- = Հրց 71	-----
Օգնող	----- + Հրց 14	----- + Հրց 30	----- + Հրց 46	----- + Հրց 58	----- = Հրց 72	-----
Գուրծով լեցուն	----- + Հրց 7	----- + Հրց 22	----- + Հրց 37	----- + Հրց 52	----- = Հրց 66	-----
Տուող	----- + Հրց 8	----- + Հրց 23	----- + Հրց 38	----- + Հրց 53	----- = Հրց 67	-----
Հիւրասէր	----- + Հրց 15	----- + Հրց 32	----- + Հրց 45	----- + Հրց 60	----- = Հրց 78	-----

Հոգեւոր պարգեւներ Աստուածաշունչի՞ն մէջ

Ա Կորն. 12.8-10, 28-30

Հռովմ. 12. 6-8

Եփես. 4.11

Ա Պետ. 4.9-11